3858

Կանանագիր
Հայ ընթերցասիրաց
Տրտրյան. Բարեկրթի
Հրատարակ (1908թ.)

02
Z-24

Կ. Պոլիս, 1914.

61

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱԲԵՐԴԻ

(ՀԻՄՆՈՒԱԾ 1908 ԻՆ)

1908
ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՍԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՔ
Կ. ՊՈԼԻՍ
—
1914

02
Z-24

2010

2001

9573

9573-ա.հ.

02
Z-24

370
2023-44

1004
159262

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱԲԵՐԴԻ

Հ.Ս.Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
именна, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲԱԲԵՐԴԻ

1908

Ա.

ՆՊԱՏԱԿ

—

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է

Ա. — Տարածել ընթերցանութիւնը Բաբերդի Հայ ազգաբնակութեան մէջ և սատարել անոր զարգացման։

Բ. — Արթնցնել ժողովուրդի խաւերուն մէջ ինքնագիտակցութեան գաղափարը և ոգին։

Գ. — Տեղական տարրերու եղբայրակցութեան ամրապնդման սատարել։

Բ.

ՄԻՋՈՑ

Ա.— Բանալ դրադարան-ընթերցարան-լսարան. հաստատել ձրի դասընթացքներ և բանախօսութիւններ. տալ ներկայացումներ, օժանդակել նիւթապէս աղքատիկ ուսանողներու կրթութեան։

ԾԱՆՕԹ. — Միութիւնս առայժմ բացած է միմիայն կիրակնօրեայ գրադարան-ընթերցարան մը. առաջիկային ամենօրեայ ըլլալու պայմանաւ. միւս միջոցները հետզհետէ գործադրելի են։

Գ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. Ա. — Մխուրեանս կրնան մասնակցիլ 20 տարին լրացուցած բարի վարքի տէր ամէն անհատ. վարիչ մարմնոյ կողմէ ընդունելի նկատուելէ յետոյ։

Բ.— Իւրաքանչիւր անդամ իրը մուտք նախ պարտական է վճարել 5 ղրուշ և ապա շաբաթական 20 փարա բաժնեգին։

Գ.— Միութեանս անդամները պիտի կրնան առանց վճարի օգտուիլ գրադարան-ընթերցարանիս գրական մթերքէն, (գիրք, թերթ եւլն.) առանց ո եւ է մէկուն տալու։ Ոչ-անդամակիցներու համար ընթերցարանի մուտքը ձրի է։

Դ.— Միութեանս անդամներէն ո եւ է պատճառով հրաժարողը անպայման կերպով կը զրկուի իր վճարածները ետ առնելու իրաւունքէն։

Ե.— Անդամ մը ցորչափ գրաւորապէս հրաժարած չէ, իր յետնեալ շաբաթավճարները տալու պարտաւոր է. հակառակ պարագային, իր պարտքը ընդհանուր հաշուեքննութեան միջոցին հրապարակաւ ի ցոյց դրուելէ և ընդհանուր ժողովին մասնակցելու իրաւունքէն զրկուելէ վերջ, հրաժարուած կը նկատուի։

Զ.— Մխուրեանս անդամակցութենէ կը վտարուին ընդհանուր ժողովոյ որոշմամբ, կանոնադրիս տրամադրութեան դէմ գործողները։

Է.— Երբ Միութիւնս ո՛ և է պատճառաւ լուծուի, իր բոլոր գոյքերը և դրամները ամբողջապէս Ադգ. Առաջնորդարանի, Քաղաք. ժողովոյ տրամադրութեան տակ պիտի դրուին։

ԾԱՆՕԹ.— Միութիւնս լուծուած կը նկատուի երբ եօթը անդամէ պակաս մնայ։

Ը.— Միութիւնս ունի իր սեփական կնիքը՝ որուն վրայ փորագրուած է հետեւեալը. «Հայ Ընթերցասիրաց Միութիւն Բաբերդի. Պայպուրտ Էրմէնի դրատնթերվէր լիթիհատը. 1908 Բաբերդ ١٣٢٤»։

Թ.— Միութիւնս ունի իր ընդհանուր ժողովի և վարիչ մարմնոյ ատենագրութեանց, հաշուական դոյից և դրեանց տոմարները և թղթակցութեանց ընդօրինակութիւնները։

Դ.

Ժ.— Միութիւնս իր անդամոց մեծամասնութեամբ կը կազմէ ընդհանուր ժողովը։

ԺԱ.— Միութիւնս ունի իր նախագահը և քարտուղարը, որոնք կ'ընտրուին ընդհանուր ժողովոյ կողմէ քուէից բացարձակ առաւելութեամբ։

ԺԲ.— Նախագահի և քարտուղարի պաշտօնը մէկ տարի է և վերընտրելի են։

ԺԳ.— Նախագահին պաշտօնն է՝

1. Նախագահել ընդհանուր ժողովոյ նիստերուն։

2. Ընդհանուր ժողով հրաւիրել՝ իր քարտուղարին հետ համախորհուրդ, երբ հարկը պահանջէ, ներկայացուած խնդիրներու համար. նիստը 15 օրէն աւելի չյետաձգելու պայմանաւ։

3. Ներկայացնել ընդհանուր ժողովոյ՝ վարիչ մարմնոյն և անդամներուն կողմէ եղած գրաւոր դիտողութիւնները և դրսէն եղած դիմումները։

4. Ստանալ վարիչ մարմնոյն վեցամսեայ հաշիւները, և ներկայացնել ընդհանուր ժողովին, որմէն կարգուած քննիչ մասնախումբին քննութենէն և վաւերացումէն վերջ կը ներկայացուի Ազգ. Առաջնորդարան և կը կախուի եկեղեցւոյ դուռը, ի դիտութիւն ժողովրդեան և հրատարակութեան կը տրուի ի հարկին։

ԺԴ.— Միութիւնս ունի նաեւ վարիչ մարմին մը, որ կը բաղկանայ 7-9 անդամներէ և կ'ընտրուի ընդհանուր ժողովէն քուէից բացարձակ առաւելութեամբ։

ԺԵ.— Վարիչ մարմնոյ պաշտօնավարութիւնը վեցամսեայ է և անդամները վերընտրելի են։

ԺԶ.— Վարիչ մարմինը կ'ունենայ ատենապետ մը, դեր-ատենապետ մը, ատենադպիր մը, դանձապահ մը, գրապահ մը և օգնական գրապահ մը, որոնք կ'ընտրուին վարիչ մարմնոյ կողմէն։

ԺԷ.— Վարիչ մարմինը նիստ կ'ընէ առնուազն երկու շաբաթը անդամ մը, ատենապետին հրաւէրով, և կը տնօրինէ միութեան և ընթերցարանին ընթացիկ գործերը. միջոցներ կը խորհի ընթերցարանի, լսարանի, ձրի դասընթացքներու, բանախօսութեանց և ներկայացումներու հաստատման և կազմակերպութեան մասին։

ԺԸ.— Վարիչ մարմնոյ ատենապետին քով կը գտնուի միութեանս պաշտօնական կնիքը, բայց առանց վարիչ մարմնին որոշման գործածելու իրաւունք չունի։

ԺԹ.— Վարիչ մարմնոյ անդամ մը, առանց բանաւոր պատճառի, եթէ նիստերէն երեք անգամ բացակայի անընդհատ, հրաժարեալ կը նկատուի վարիչ մարմնոյ անդամակցութենէն, որուն կը յաջորդէ համեմատականի մնացած առաւելագոյն քուէ շահողը։

ԾԱՆՕԹ.— Բանաւոր պատճառ կը նկատուի հիւանդութիւնը եւ քաղաքէն երկարատեւ բացակայութիւնը։

Ի.— Վարիչ մարմինը իր պաշտօնավարութեան լրմանը, Միութեանս և ընթերցարանին վերջամնայ գործառնութեանց և եղեւմտից հաշիւները տեղեկագրով մը կը ներկայացնէ միութեանս նախագահին։

ԻԱ.— Վարիչ մարմնոյ անդամները հաւասարապատասխանատու են գանձապետին և գրապահին գործառնութեանցը. պատահած ո և է նիւթական վնաս և զեղծում պիտի տուժեն հաւասարաբար։

ԻԲ.— Վարիչ մարմնոյ ո և է անդամ եթէ իր պաշտօնավարութեան ընթացքին մէջ զեղծում գործէ. յետ քննութեան, ընդհանուր ժողովոյ կողմէն կը պաշտօնանկուի և այլեւս բնաւ պաշտօնի չանցնիր։

ԻԳ.— Գանձապետի պաշտօնն է՝

1. Միութեանս անդամներուն մուտքի դրամները հաւաքել և գանձել բաժնեգիրները։

2. Ստանալ զանազան անհատներէ ըլլալիք դրամական և այլ նուէրները և արձանագրել հաշուետոմարին մէջ։

3. Գանձապետը, առանց Վարիչ մարմնոյն գիտութեան և որոշման, ինքնագլուխ (10) տասը ղրշ.էն աւելի գնում և ծախս ընելու իրաւունք չունի։

ԻԴ.— Գրապահին և օժանդակ—գրապահին պաշտօնն է։

1. Ստանալ Վարիչ մարմնոյն յանձնած գիրը,

թերթ. կամ կարասիք ևն. և մանաւոր տոմարի մէջ արձանագրելէ վերջ, անոնց անկորուստ պահպանման հսկել։

2. Գրադարան — ընթերցարանին գրենական մթերքէն օգտուիլ ուզող ոչ-անդամակիցներու տալ խնդրուած գիրքը, երբ հարկ տեսնուի ստանալէ վերջ անոր արժէքին մէկուկէս անդամը՝ իբր աւանդագին, բացի որոշ վարձքէն, (մէկէն վեց օրուան համար, մինչեւ 5 դրչ. արժող գրքէն 20 փրչ. իսկ անկէ վեր եղողներուն հմր. 1 դրչ.)։

3. Բացարձակապէս արգիլուած է ոչ-անդամակիցներու ընթերցարանէն դուրս տալ պարբերաթերթ և օրաթերթ։

4. Միութեանս անդամներուն տարած գիրքերուն փոխարէն ընկալագիր առնել եթէ հարկ տեսնուի։

Իե.— Կանոնագիրս վերաքննելի է։

ՎԵՐՋ

ԾԱՆՈԹ.— Միութեանս կնիքը չկրող օրինակները վաւերական չեն։

№ 1 ՀԱՅՐԱՑԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
Շ/Հ 1922
ՄՈՍԿՎԱ, Ռեսպուբլիկ
Ա. ՄԵՍՐՈՊ ԽԱՆԻՆ ԱՆՎԱՆ

Տեսուչ՝

[illegible]

Գրադարանի [illegible] [illegible]

[illegible]

Գրադարանապետ՝ [illegible]

Հ.Հ. Դեսպանատան [illegible]

Կարդացեալ [illegible]

ارمنی قرائت خانه سی - پولس
1008 Բարերդ 1922
ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

0019610

<< Ազգային գրադարան
NL0019610

Սոյն Կանոնագիրդ վաւերացուած է տեղական կառավարութեան կողմէ, 1327 Փետրուար 24 թուակիր եւ 737 հաւար պաշտօնագրով :

3858